# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

# <<ՍԱՐԱԼԱՆՋԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ /2023-2028թթ/

**դպրոցի տնօրենի հավակնորդ**

**Արմենուհի Այլոշայի Հովհաննիսյան**

# Նախաբան

Սարալանջի հիմնական դպրոցի զարգացման ծրագիրը ուսումնական հաստատության ռազմավարական փաստաթուղթն է,որի հիման վրա պլանավորված է դպրոցի՝ 2023-2028թթ. զարգացման տեսլականը:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:

Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը:

Արագ փոփոխվող աշխարհին իր անմիջական ներգործությունն է ունենում հանրակրթական դպրոցի վրա՝ առաջադրելով տարատեսակ խնդիրներ:

Այսօր, առավել քան երբևէ, որակյալ մասնագետների պահանջարկն առաջնահերթ է դարձնում աշխատանքային շուկայի պահանջներին արագորեն հարմարվելու և տեղաշարժվելու կարողությունը:

Պետության և ազգի կայացման, հզորացման գործում շատ կարևոր է ազգային-պետական մտածելակերպ, քաղաքացիական կեցվածք ունեցող, սեփական երկրի ճակատագրով մտահոգ, կյանքի դժվարություններին դիմակայելու պատրաստ մարդու ձևավորումը: Այս գործոններով պայմանավորված հանրակրթության ոլորտում անհրաժեշտ է դառնում ուսուցման ավանդական մոտեցումների հետ միասին ստեղծագործաբար մոտենալ կյանքի առաջադրած խնդիրներին,կատարել որոշակի կառուցվածքային և բովանդակային փոփոխություններ, շարունակել բարձրացնել ՏՀՏ-ի դերը կրթական համակարգում:

ՀՀ Արագածոտնի մարզի <<Սարալանջի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի զարգացման ծրագիրը կազմված է 2023-2028 թվականների համար:

# ***Կարգախոս***

## *Անընդհատ ինքնակատարելագործում և առաջընթաց*

# ***Դպրոցի առաքելությունը***

<<Հանրակրթությունը անհատի, հասարակության և պետության շահերից բխող, Հանրակրթության պետական կրթակարգին համապատասխան անձի ուսուցման և զարգացման գործընթաց է,որը նպատակաուղղված է երեխայի, սովորողի մտավոր, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքին նախապատրաստմանը, մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական կրթության նախապատրաստմանը>> :

Հանրակրթության մասին ՀՀ օրենք

Հիմնական դպրոցի համար ցանկալի ապագայի մտապատկերը սովորողներին ազգային հենքի վրա և հիմնական որակյալ կրթություն տալն է: Այդ կրթության նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության և մարդասիրության ոգով դաստիարակված անհատների ձևավորումն է , որոնք կարող են իրենց կրթությունը շարունակել կրթության ոլորտի հաջորդ աստիճաններում:

Դպրոցի առաքելությունը իրականացնելու գերխնդիրը կրթականարդյունավետ գործիքների միջոցով սովորողներին՝ իրենց ձգտումների և ընդունակություններին համապատասխան անընդհատ ինքնակատարելագործվելու և առաջընթացապահովելու հնարավորություն ստեղծելն է:

ՀՀ Արագածոտնի մարզի Սարալանջի հիմնական դպրոցի հնգամյա զարգացման ծրագիրը կազմվել է հիմքում ունենալով հանրակրթության ոլորտը կանոնակարգող հետևյալ իրավական ակտերը.

- <<Կրթության մասին>>, <<Հանրակրթության մասին>>, <<Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին,<<Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենք>>, <<Գնումների մասին ՀՀ օրենք>>,ՀՀ աշխատանքային օրենսգիրք,<<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին ՀՀ օրենք>>, այլ օրենքներ և դրանցից բխող ենթաօրենսդրական ակտեր

- ՀՀ Կառավարության սահմանած «Հանրակրթության պետական չափորոշիչ

- ՀՀ Արագոծոտնի մարզի << Սարալանջի հիմնական դպրոց>>ՊՈԱԿ-ի կանոնադրություն

# ***Ընդհանուր տեղեկություններ***

Դպրոցը հիմնադրվել է 2003 թվականին: Մասնակի վերանորոգվել է 2020թվականին:

Դպրոցն ըստ ՀՀ ԿԳՆ 2010 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1727/Ա/Ք հրամանով տրված N0084/տարրական/ և N0079/հիմնական/ լիցենզիաների՝ իրավունք ունի իրականացնելու տարրական ընդհանուր առաջին աստիճան 50 սահմանային տեղով, հիմնական ընդհանուր երկրորդ աստիճան 50 սահմանային տեղով մինչև 100 աշակերտ/տեղ հզորությամբ:Շենքը մեկհարկանի է, ունի 0,4 հա դպրոցամերձ բակ:

2022-2023 ուս. տարում դպրոցն ունի 17 աշակերտ, կոմպլեկտավորվել է չորս դասարան:Դպրոցում այսօր առկա է վեց դասասենյակ, մեկ գրադարան, մեկ ճաշարան և մեկ ուսուցչանոց:

Համակարգչային սենյակը բացակայում է:Առկա է մեկ բազմաֆունկցիոնալ համակարգիչ և հինգ համակարգիչ:

Ջեռուցումը՝ էլեկտրականությամբ:

Չունի լաբորատորիա,մարզադահլիճ և մարզագույք:

Դպրոցն ունի 10 ուսուցիչ, որոնցից ութը բարձրագույն կրթություն ունի, երկուսը՝ միջնակարգ մասնագիտական:

# ***Հաստիքակազմ***

| ***Հաստիք*** | ***Դրույք*** |
|---|---|
| Տնօրեն | 1 |
| Հաշվապահ | 0.5 |
| Գրադարանավար | 0.5 |
| Օպերատոր | 0.5 |
| Դռնապահ | 0.5 |
| Հավաքարար | 1 |
| Պահակ | 2 |

Դպրոցի հիմնական խնդիրները հասկանալու և իրատեսական նպատակներ առաջադրելու նպատակով, ինչպես նաև դպրոցի ուժեղ և թույլ կողմերը բացահայտելքու համար հանդիպումներ եմ ունեցել դպրոցի մանկավարժական և ծնողական խորհուրդների հետ, որոնց առաջարկությունները, կարծիքները և դիտարկումները հնարավորինս արտացոլել եմ դպրոցի զարգացման ծրագրում:

## ***Սարայանջի հիմնական դպրոցի ուժեղ և թույլ կողմերը՝ ըստ մեզ տրամադրված տեղեկագրի և մեր վերլուծությունների***

***ՈՒժեղ կողմեր***- կուռ և համախմբված մանկավարժական կոլեկտիվը,ուսուցչական համակազմի մեծ մասը ունի երկարամյա փորձ, մասնագիտական բարձր կարողություններ,ունակ է իրականացնելու թիմային աշխատանք, կոլեկտիվում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտը,ուսուցիչները՝ հատկապես երիտասարդները կարողանում են օգտվել համակարգչային տեխնիկայից,վերապատրաստված են , վայելում են գյուղի հասարակության հարգանքը:Դպրոցն ապահովված է ուսումնամեթոդական գրականությամբ և ծրագրային նյութերով,տարվա ընթացքում կազմակերպվում են բազմաթիվ միջոցառումներ, էքսկուրսիաներ:
Աշակերտների նվազ թվաքանակը ունի նաև իր դրական կողմը առնվազն նպաստում է բարձր կարգապահության:Շենքը քարից է:

***Թույլ կողմեր***- փոքր աշակերտական համակազմ, մանկավարժների մի մասի այլ բնակավայրերից տեղափոխումը,տարատարիք դասարանների ձևավորում,լաբորատոր և համակարգչային դասարանների բացակայություն, հնացած և չաշխատող համակարգիչներ,մարզադահլիճի և մարզական տարածքի բացակայություն, շենքի ներքին ոչ բարվոք վիճակ:
Այլ ուժեղ և թույլ կողմեր մեր կողմից կբացահայտվեն աշխատանքային գործունեության ընթացքում:

## ***ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ***

Հանրակրթության համակարգում տեղի են ունենում համակարգային փոփոխություններ, որոնք պայմանավորված են ոչ միայն ազգային առանձնահատկություններով, այլև համաշխարհային զարգացումներին բնորոշ աշխարհաքաղաքական, ժողովրդագրական, մշակութային, սոցիալական գործոններով: Հանրակրթական էական բարեփոխումը և առաջանցիկ զարգացումը դառնում են անհրաժեշտ ու անխուսափելի: Պետության և ազգի անվտանգության ապահովման ու հզորացման գործում գերակա խնդիր է դառնում պետական մտածելակերպ, հզոր անհատականությամբ օժտված, տեսական ու գործնական խոր գիտելիքներ ունեցող և ժամանակի ու ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ մարդու ձևավորումը:

Հանրակրթության դերն աճում է. միաժամանակ կրթությունը վերաճում է միգործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության արժեքային որակներ: Կրթության պահանջարկը թելադրվում է ոչ միայն Հայաստանի ներկայիս աշխատաշուկայի կողմից, այլև բարձրարժեք արտադրանքի և հմտությունների ապագայամետ գլոբալ շուկայի կողմից:

Որակյալ մասնագետի պահանջարկն առաջնահերթ է դարձնում աշխատանքայինշուկայի պահանջներին արագորեն հարմարվելու և տեղաշարժվելու կարողությունը: Գիտելիքը դառնում է զարգացման հիմնական շարժիչ ուժը, կրթության դերն ավելի ռազմավարական կարևորություն է ստանում:

Կրթական բարենպաստ միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը ենթադրում է ուսուցման ավանդական մոտեցումների վերանայում և հանրակրթական ուսումնական հաստատությունների նկատմամբ վերաբերմունքի ճշգրտում:

Շարունակաբար նորացվող, զարգացող ու փոփոխվող գիտելիքները և դրա ստեղծման համար անհրաժեշտ նորարարությունը դառնում են մրցունակության և արդյունավետության բարձրացման կարևորագույն գործոններ՝թե՛ անհատական, թե՛ ներպետական և թե՛ համաշխարհային մակարդակներում: Գիտելիքն այսօր այլևս լոկալ բնույթ չի կրում. ցանցերի ու հեռահաղորդակցման դարաշրջանում աշխարհի որևէ ծայրում ստեղծված գիտելիքն արագորեն տեղայնացվում է աշխարհի մեկ այլ անկյունում:

Նման պայմաններում առավել արդյունավետ ու հաջողակ են այն անհատները, խմբերն ու պետությունները, որոնք կարողանում են կիրառել նորագույն գործիքների ավելի մեծ տեսականիև բաց են շարունակ տեղի ունեցող փոփոխությունների առջև, բայց չեն կորցնում իրենց ինքնությունը: Նրանք տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների /ՏՀՏ/ միջոցով ցանցավորված են միմյանց և աշխարհի հետ, կարողանում են աշխատել թիմերով, ստեղծագործաբար են մոտենում կյանքի առաջադրած խնդիրներին և պատրաստ են շարունակաբար սովորել:

Ինչպե՞ս հասնել դրան: Այս ամենին հասնելու հիմնական ճանապարհը դպրոցական կրթությունն է, որի ձևերն ու բովանդակությունը, ինչպես նաև կրթական միջավայրը փոխվում են՝ արձագանքելով գիտելիքի փոխանցման և տարածման արագընթաց տեմպերին ու պահանջներին:

Համաշխարհային արդի զարգացումներն իրենց անմիջական ներգործությունն են ունենում հանրակրթական դպրոցի վրա՝ առաջադրելով տարատեսակ խնդիրներ:

Գիտատեխնիկան առաջընթացի աննախադեպ արագության, բարձր տեխնոլոգիաների հարաճուն ներդրման և կիրառման հետևանքով ազգային և համաշխարհային տնտեսություններն անընդհատ վերակառուցվում են: Արդյունաբերական տնտեսությունը վերաճում է գիտելիքների տնտեսության, իսկ հասարակությունը դառնում է տեղեկատվական:Անընդհատ փոփոխվում է աշխատանքային միջավայրը, նորովի են կազմավորվում և վերաբաշխվում աշխատատեղեր:

Այս ամենը դիտարկելով որպես տեսլական պետք է դպրոցը երեխաների համար դարձնենք հաճելի և սիրելի միջավայր, որտեղ կձևավորվեն ազատ, քննադատական և վերլուծական մտածելակերպ ունեցող քաղաքացիներ:

ՀՀ Արագածոտնի մարզի Սարալանջի հիմնական դպրոցի առաքելությունն է.

**1**.Ազգային հենքի վրա սովորողների որակյալ կրթության կազմակերպումը

**2**.Համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության և մարդասիրության ոգով դաստիարակված կարողունակ քաղաքացու ձևավորումը

**3**.Տարածաշրջանում բարձր վարկանիշ ունեցող, մրցունակ և բարեհամբավ դպրոցի ստեղծում:

## ***Հիմնահարցեր***

1. Դպրոցի ուսումնական գործընթացի դաստիարակչական ուղղվածությունը
2. Դպրոցում սովորողների ուսումնական ծանրաբեռնվածությունը
3. Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան հարստացնելու հնարավորությունը

## ***ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ***

**1.** Պետական չափորոշիչներին համապատասխան՝ ճանաչողական բազմակողմանի գործունեություն ապահովող ուսումնական գործընթացի արդյունավետության և կրթության որակի բարձրացում և դրան համապատասխան ուսումնական միջավայրի ապահովում:

**2.** Կրթության գործընթացում երեխայի առավելագույն մասնակցությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ մեթոդական,ծրագրային և միջավայրային փոփոխությունների և հարմարեցումների՝ կրթության առանձնահատուկ պայմանների կատարում:

**3.** Պետական խորհրդանիշների հանրահռչակում, քաղաքացիական և ռազմահայրենասիրական դաստիարակություն:

**4.** Դպրոցում միջանձնային բարենպաստ միջավայրի և մշակութային ոլորտի ձևավորում:

**5.** Դպրոցի դաստիարակչական համակարգի կատարելագործում:

## ԱՌԱՋԻՆ ՆՊԱՏԱԿ. ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

1. Անհատի հնարավորությունների, կարողությունների բացահայտո
2. Սեփական ուսումնամեթոդական նյութերի բազայի ստեղծում
3. ՏՀՏ-ների ճիշտ և նպատակային կիրառությունը ուսումնական գործընթացում
4. Նորարական աշխատանքներին մանկավարժների ներգրավածության ապահովում
5. Հին և նոր մեթոդների ներդաշնակ փոխկապակցվածության ապահովում
6. Համագործակցային ուսուցման մեթոդների առաջնահերթության ապահովում
7. Յուրաքանչյուր աշակերրրտի մոտ ըստ ընդունակությունների առավելագույն գիտելիքների և կարողությունների պահանջի ձևավորում
8.ԿԶՆԱԿ հիմնադրամի հետ ուսուցիչների մշտական կապի հետ ամրակայում, ուսումնական պլանների, նյութերի ստեղծման, ինչպես նաև ծրագրերի բարեփոխման գործընթացում նրանց ներգրավում
9.Դպրոցում առաջավոր փորձի ստեղծում
10.Դպրոցը դարձնել յուրաքանչյուր աշխատողի և սովորողի ստեղծագործական կարողությունները, նախասիրությունները բացահայտող և ձևավորմանը նպաստող, որակյալ կրթություն ապահովող որակյալ կենտրոն
11.Դպրոցում զարգացնել յուրաքանչյուր երեխայի բնատուր ունակությունները՝ուսումն իրականացնելիս շեշտադրում կատարել ոչ միայն մի քանի ‹‹ընտրյալ›› ընդունակների, այլ երեխաների հիմնական զանգվածի վրա՝ուշադրության կենտրոնում պահելով թույլ առաջադիմություն ունեցողների կրթական պահանջմունքների բավարարման խնդիրները
12. Ուսուցիչներին ընդգրկել տարբեր տիպի վերապատրաստման դասընթացներում, կրթական ծրագրերում
13.Խրախուսել ուսուցիչների մասնակցությունը մրցույթներին, կոնֆերանսներին, սեմինարներին
14.Լավագույն ուսուցիչների փորձը տարածել դպրոցում

15.Ուսուցիչներին մասնակից դարձնել նոր ծրագրերին, դասագրքերի փորձարարական աշխատանքներին, քննարկումներին

16.Աշակերտների համար հաճախակի կազմակերպել օլիմպիադաներ, առարկայական մրցույթներ և միջոցառումներ

17.Դպրոցում տարբեր ընդունակություններ ունեցող աշակերտների կողմից իրականացնել խմբային հետազոտությունների նախագծեր, համապատասխանեցնել դրանք ընտանիքներին և հասարակության համակեցության ավանդական նորմերին

18.Աստիճանաբար ուսումնադաստիարակչական հարցերում ապահովել երեխայակենտրոն մոտեցում՝ներդաշնակորեն համադրելով ուսուցման ավանդական և արդիական մեթոդների կիրառումը

19.Սեփական մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով կազմել յուրաքանչյուր ուսուցչի համար ‹‹ուսուցչի թղթապանակ››

20.Մշակել և գործողության մեջ դնել աշակերտների դաստիարակության սեփական հայեցակարգ

21.Աստիճանաբար հասնել այն բանին, որ դասավանդման ընթացքում ուսուցիչների և աշակերտների միջև ստեղծվեն փոխհամագործակցության այնպիսի կապեր, որոնց արդյունքում աշակերտը հայտնվի ուսուցանողի դերում և ուսուցիչը կարողանա հմտորեն ուղղորդել աշակերտների խմբային աշխատանքներն այնպես, որ աշակերտի մոտ դասավանդվող ուսումնական նյութի թյուր ըմբռնումներ չլինեն,ապահովեն դասապրոցեղի գործընթացում բոլոր աշակերտների մասնակցությունը և ուսումնական նյութի առավելագույն յուրացումը՝ պետական չափորոշիչներին համապատասխան գիտելիքներ ապահովելով յուրաքանչյուր աշակերտի մոտ

22.Արմատավորել թիմային կառավարումը

23.Զարգացնել տարբեր առարկաների ուսուցիչների՝ աշակերտի մասնագիտական կողմնորոշման խնդիրների լուծմանը նպաստող հմտություններ

## ***ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ***

- Էլեկտրոնային մեթոդական գրադարանի ստեղծում:
- Ուսումնական նյութերի ուսումնասիրությունների, հետազոտությունների քննարկում, օգտագործում:
- Աշակերտների միջոցով էլեկտրոնային նյութերի ստեղծում և մրցույթների կազմակերպում:
- Էլեկտրոնային նյութերի, հարցաշարերի, հարցարանների և ուսումնական խաղերի ստեղծում և օգտագործում:
- Լավագույն ուսուցիչների փորձի տարածում,
- Աշակերտների շրջանում կազմակերպել տարբեր միջոցառումներ (ցուցահանդեսներ,մրցույթներ)՝ նվիրված մասնագիտական կողմնորոշման բնագավառում նրանց նվաճումներին
- Հովանավորություն փնտրել գործարարների մեջ, բոլոր տարիների շրջանավարտների մեջ և ստեղծել շրջանավարտների խորհուրդ:
- Դիմել ծնողական համայնքին:

## ***Երկրորդ Նպատակ. Իրագործման ուղիներ***

- Այնպիսի կրթական միջավայրի և պայմանների ստեղծում,որոնց դեպքում բոլոր երեխաները՝անկախ իրենց առանձնահատուկ կրթական կարիքներից,ունեն կրթություն ստանալու հավասար հնարավորություններ: Նման միջավայրը պետքէ լինի երեխաներին ներառող, կրթություն ստանալու համար արդյունավետ, երեխաների նկատմամբ բարյացակամ, նրանց առողջության համար ապահով ու անվտանգ:
- Ուսուցիչների վերապատրաստում:
- Տեղաշարժման տարբեր խնդիրներ ունեցող անձանց համար ֆիզիկական մատչելիության ապահովում

## ***Երրորդ նպատակ. Իրագործման ուղիներ***

- Ազգային ինքնության պահպանումը քաղաքացիական դաստիարակության գործընթացում՝ պետական կառուցողական արժեհամակարգերի ներդրման միջոցով:
- Հանուն ազգային հոգևոր-մշակութային արժեքների վերարտադրման՝ պետական խորհրդանիշների (Հայաստանի Հանրապետության դրոշ, Հայաստանի Հանրապետության օրհներգ ), ազգային ինքնության և անկախության բաղկացուցիչների (հայոց լեզու, ընտանիք, Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցի, Հայաստանի Հանրապետության անկախության մասին հռչակագիր, Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Հայաստանի Հանրապետության պետական մարմիններ, մայրաքաղաք, ազգային դրամ) բովանդակության նպատակային պահպանումը և տարածումը:
- Պետականության և նրա բաղկացուցիչների նկատմամբ հարգանքի ու ակնածանքի արմատավորումը, քաղաքացիական վարքի մշակույթի ձևավորում:

- Ցույց տալ ազգային-ազատագրական պայքարի դրվագները, հայ ժողովրդի խիզախ ու քաջարի զավակների անձնազոհ սխրանքները, որոնք օրինակ կդառնան սովորողների համար, կոգեշնչեն նրանց և կմղեն հայրենիքին անմնացորդ նվիրվելու գործին:
- Դաստիարակել հայրենիքին նվիրվելու և այն կյանքի գնով պաշտպանելու կամք ու վճռականություն: Սերմանել այն գաղափարը, որ հանուն հայրենիքի ու հայոց բանակում ծառայելը պատվի գործ է:
- Մարդասիրության և սոցիալական արդարության ոգով տոգորված ժամանակակից ազատ ու գիտակից անհատի ու քաղաքացու ձևավորումը:
- Անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել Հայաստանի Հանրապետությանը, պատկերացում կազմել համաշխարհային պատմության մեջ Հայաստանի և հայ ժողովրդի զբաղեցրած տեղի ու դերի մասին:
- Հայկական մշակույթի ձևավորումն ու զարգացումը պայմանավորող պատմական պայմանների իմացության գիտակցում:

## ***<u>Գործողությունների Պլան</u>***

- Ազգային ինքնության, պետական խորհրդանիշների, պետական կառավարման համակարգի վերաբերյալ համապատասխան ուսումնական ծրագրերի մշակում և իրականացում:
- ՀՀ օրհներգի պարտադիր ուսուցման կազմակերպում և օգտագործում:
- Պետական խորհրդանիշներ» թեմայով դասղեկական ժամերի անցկացում:
- Ազգային, պետական և պատմական խորհրդանիշների վերաբերյալ ինտերնետային կայքի աշխատանքների ակտիվացում
- <<Հայկական պետական և՛ ազգային խորհրդանիշեր և՛ պարգևներ>> ալբոմի ստեղծում:
- Հայոց պետական խորհրդանիշները վաղնջական ժամանակներից մինչև մեր օրերը>> բաց դասի կազմակերպում

- Էքսկուրսիաների կազմակերպում՝ ‹‹Հայաստանն իմ տունն է›› խորագրի ներքո:
- Ազգային և պետական խորհրդանիշների /դրոշ, օրհներգ և զինանշան/և քաղաքացիական վարքի կանոնների իրազեկում:
- <<Խաղաղության զինվորներ>> թեմայով նկարչական աշխատանքների ցուցադրում:
- <<Նրանք ծառայում են հայրենիքին>> վահանակի ձևավորում:
- <<Հերոսները շրջում են մեր մեջ>> թեմայով զրույցների անցկացում:
- Հայրենասիրական թեմաներով ֆիլմերի դիտում:
- Նամակագրական կապ ունենալ Հայոց բանակի երիտասարդ սպաների հետ՝ ելնելով ուսումնական-ծրագրային նյութի պահանջներից:
- Անցկացնել արիության դասեր ևՀայոց բանակի օրվան նվիրված դասղեկական ժամեր, միջոցառումներ:
- Աշխարհն առանց պատերազմների դասղեկական ժամերի անցկացում:
- Կազմակերպել ՀՀ պետական տոներին և հիշատակի օրերին նվիրված հանդիսավոր միջոցառումներ, Հայաստանի ազգային և Արցախի հերոսների ռազմական և պետական գործիչների, ծննդյան տարեդարձերի և մահվան տարելիցներին նվիրված հանդիսավոր բաց դասեր:
- Ռազմագիտության դասերին կազմակերպել այցելություններ զորամասեր, մասնակցել կրակային վարժանքներին:
- Ռազմագիտության դասերին ուսուցանել ռազմական գիտելիքներ, գործնական հմտություններ ու կարողություններ և համակրանք ռազմարվեստի և զինծառայության նկատմամբ:
- Կազմակերպել ռազմակիրառական և ռազմամարտավարական խաղեր:

## Չորրորդ նպատակ. Իրագործման ուղիներ

- Կոլեկտիվում ստեղծել և պահպանել համագործակցային, հանդուրժողական մթնոլորտ:
- Առաջնորդվել ՀՀ սահմանադրությամբ, ՀՀ ‹‹ Կրթության մասին օրենք››- ով, դպրոցի կանոնադրությամբ և այլ իրավական և նորմատիվ ակտերով:
- Համագործակցել դպրոցի կառավարման խորհրդի հետ:
- Ակտիվացնել դպրոցի մանկավարժական խորհրդի, ծնողական խորհրդի և աշակերտական խորհրդի աշխատանքները, նրանց միջև ստեղծել համագործակցայի կապեր:
- Որոշումների կայացմանը մասնակից դարձնել կոլեկտիվի անդամներին, ծնողներին, անհրաժեշտության դեպքում նաև աշակերտներին:
- Ծնողների համար կազմակերպել սեմինարներ՝ հոգեբանական, մանկավարժական թեմաներով:
- Կազմակերպել օգնություն սոցիալապես անապահով ընտանիքներին:
- Աշակերտների համար պարբերաբար կազմակերպել համադպրոցական միջոցառումներ,էքսկուրսիաներ և մրցույթներ:
- Աշակերտներին ընդգրկել առարկայական, մշակութային, սպորտային և այլ խմբակներում:
- Աշակերտներին ընդգրկել հանրօգուտ աշխատանքներում:
- Դպրոցում ապահովել սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների կրթության մատչելիությունը:

## ***Չորրորդ նպատակի իրագործման գործողությունների պլան***

- Սովորողների մոտ մշակել բանավիճելու արվեստից բխող կանոններ
- Կազմակերպել սովորողների օգնությունը սոցիալապես անապահով ընտանիքներին
- Հանրօգուտ աշխատանքի շրջանակներում կազմակերպել ‹‹Մեր դպրոցը մեր տունն է›› միջոցառումների շարք
- Սովորողների ուժերով ստեղծել, երգի, ասմունքի խմբակներ և կազմակերպել ելույթներ, ցուցադրություններ
- Սովորողներին փոխհաղորդակցության և երկխոսության լայն հնարավորության տրամադրման նպատակով կազմակերպել իրազեկող միջոցառումներ, խաղեր
- Ժողովրդավարական սկզբունքով որոշումների ընդունում. Ուսուցիչն ընդգրկում է աշակերտներին նպատակների և դրանց հասնելու միջոցների ընտրության գործընթացում
- Կազմակերպել էքսկուրսիաներ՝ Հայաստանի տարբեր վայրերում գտնվող պատմամշակութային կոթողներ
- Առարկայական անկյուններում պարբերաբար թարմացնել նշանավոր մարդկանց կյանքին ու գործին նվիրված, նշանավոր պատմական իրադարձությունների, առարկայական և մասնագիտական նորարարությունների մասին վահանակներ
- Խթանել ստեղծագործել ու կարողությունները՝ սեփական նախաձեռնությունները արժևորելով դպրոցում
- Դպրոցում կազմակերպել համերգներ՝շնորհալի աշակերտների մասնակցությամբ

## ***Հինգերորդ նպատակ. Իրագործման ուղիներ***

- Դպրոցում դաստիարակչական աշխպատանքները գնահատող չափորոշիչների մշակում
- Կոլեկտիվում համագործակցային, հանդուրժողականության մթնոլորտի ստեղծում և պահպանում
- Դաստիարակչական խնդիրներ լուծելու համար ուսուցիչների համագործակցային խմբերի ստեղծում
- Աշակերտների, ուսուցիչների, ծնողների միջև բանավեճերի հաճախակի կազմակերպում
- Աշակերտների՝ մշակութային, սպորտային և այլ խմբակներում ընդգրկում
- Սովորողների մոտ հայ մարդու արժեհամակարգային չափանիշների ձևավորում
- Առողջ ապրելակերպի հմտությունների և պատասխանատու վարքի ձևավորում
- Մարդասիրական աշխարհայացքի, հայրենասիրության, հանդուրժողականության ձևավորման կարևորում
- Սովորողների մոտ ինքնաճանաչողության, ինքնակառավարման և վերլուծողական մտածողության հմտության մշակում
- Ճանաչողական, գեղագիտական, հոգևոր պահանջմունքների բավարարմանը նպաստող աշխատանքների կազմակերպում
- Ձևավորել այն հիմնարար արժեքները, որոնց միջոցով անհատը գնահատում է իրավիճակները

## Գործողությունների Պլան և իրականացման գործիքներ

- Մասնակցությունը համայնքային, մարզային և հանրապետական միջոցառումներին
- Էքսկուրսիոն-երկրագիտական գործունեությունը
- Ռազմահայրենասիրական գործունեությունը
- Առարկայական միամսյակները
- Ծնողների և դպրոցի համագործակցությունը
- Թեմատիկ պաստառների պատրաստում, վահանակների ձևավորում
- Ըստ անհրաժեշտության հանդիպումների անցկացում լիազոր անձանց հետ
- Համագործակցություն ՀԿ-ների և այն կառույցների հետ, որոնց աշխատանքը միտված է կրթական ծրագրերի և դաստիարակչական խնդիրների լուծմանը:
- Հանդիպումներ, կլոր սեղաններ տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց հետ:
- Զարգացման ինքնադրսևորման մասնակցության հավասար հնարավորությունների ստեղծում ինտելեկտուալ խաղերի միջոցով
- Նորագույն մանկավարժական մեթոդների և տեխնոլոգիաների օգտագործումը ուսումնական պարապմունքներին, դասղեկական ժամերին և արտադասարանական միջոցառումների ժամանակ
- Ծնողական դասերի կազմակերպում
- Մանկավարժահոգեբանական ծառայության իրականացում,
- Աշակերտների անձնային աճի անհատական քարտերի ստեղծում
- Ազգային ծեսերի, ավանդույթների, միջազգային տոնակատարությունների կազմակերպում

- Արտադասարանական, արտադպրոցական աշխատանքների միջոցով ցուցահանդես մրցույթների կազմակերպում
- Սպորտլանդիաների, սպորտային խաղերի կազմակերպում
- Կարիքավոր սովորողների նկատմամբ ռազմավարության մշակում
- Վարքի շեղում ունեցող երեխաների հետ վերականգնողական միջոցառումների կազմակերպում

## ***Դպրոցի գործունեության գնահատում և ներդպրոցական վերահսկողության բարելավում***

‹‹Հանրակրթության մասին›› օրենքով նախատեսված է դպրոցի գործունեության գնահատման մեխանիզմը:

Ուսումնական հաստատության գործունեությանը տրվում է ներքին և արտաքին գնահատական:

Ներքին գնահատումը դպրոցի կողմից իր գործունեության վերլուծությունն է: Ներքին գնահատմանն անհրաժեշտաբար մասնակից դարձնել վարչական և մանկավարժական աշխատողներին, սովորողներին և ծնողներին:

Ուսումնական հաստատության ներքին և արտաքին գնահատումն ուղղորդել սովորողին մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացմանը:

## ***ԴՊՐՈՑԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ***

### Սովորողների առողջության պահպանում

Սովորողների առողջության պահպանման նպատակով մեր կողմից առաջ քաշված խնդիրները նպատակ ունեն՝

- դպրոցում ապահովել սանիտարահիգիենիկ անհրաժեշտ պայմաններ ( անվտանգսննդի, լուսային, ջերմային),
- սովորողների մոտ ձևավորել առողջ ապրելակերպի մշակույթ,
- պայքարել ծխելու, վտանգավոր սովորությունների դեմ:

Սովորողների առողջության պատշաճ պահպանումն ապահովելու ուղղությամբ նախատեսվում է

- հնարավորինս բացառել անորակ սննդի մուտքը դպրոց,
- մանկական հիվանդությունների կանխարգելման նպատակով համագործակցել արտադպրոցական բժշկական հաստատությունների հետ,
- հաճախակի կազմակերպել կանխարգելիչ միջոցառումներ՝ ուղղված դժբախտ պատահարներից պաշտպանվելու երեխաների կարողությունների ձևավորմանը,
- ուսուցիչների հետ պարբերաբար անցկացնել քննարկումներդասարանական և տնային աշխատանքներին հատկացված ժամաքանակի ռացիոնալ չափերի ապահովման վերաբերյալ,
- միջոցառումների, զեկույցների, քննարկումների միջոցով պարբերաբար անդրադառնալ դարին բնորոշ խնդրահարույց հիվանդություններին (ՁԻԱՀ, ալկոհոլիզմ, թմրամոլություն, սեռավարակներ, Քովիդ-19) և դրանց վտանգավորությանը,
- մշտապես հատուկ ուշադրության կենտրոնում պահել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մարմնակրթության և ֆիզիկական դաստիարակության խնդիրները,
- հարստացնել դպրոցի սպորտային բազան,
- ապահովել «Հանրակրթության մասին ՀՀ օրենքի պահանջը՝ պարտադիր պրոֆիլակտիկ զննության անցկացման մասին :

## ***Դպրոցի դաստիարակչական համակարգի կատարելագործում***

Դաստիարակությունը հանրակրթության կարևորագույն բաղադրիչներից մեկն է և հենց դպրոցին և ուսուցչին է բաժին ընկնում դաստիարակչական գործընթացի զգալի բաժինը, որի բաղկացուցիչ մասն է կազմում աշխատանքը ծնողների հետ:

Դաստիարկչական համակարգի նպատակն է՝

- օգնել սովորողին (հատկապես դեռահասին) առանց սթրեսների հարմարվել «աշխարհում» անընդհատ տեղի ունեցող փոփոխություններին,
- նպատակաուղղել երեխային՝ ազգային և համամարդկային արժեքների համակարգում ձևավորվելու որպես ապագա քաղաքացի,
- զարգացնել սովորողների ճանաչողական ակտիվությունը,
- աշակերտի մոտ ձևավորել հարգալից վերաբերմունք լեզվի, մշակույթի և ազգային ավանդույթների նկատմամբ՝ դարձնելով նրան այդ արժեքների կայուն կրողը, պահպանողը և փոխանցողը,
- յուրաքանչյուր անհատի մոտ ստեղծել ինքնակատարելագործման ներքին պահանջ,
- խթանել սովորողների արտադասարանական և արտադպրոցական ակտիվությունը,
- ապահովել մասնագիտական կողմնորոշումը:

Վերոնշյալ խնդիրները նպատակ են հետապնդում դպրոցում ստեղծել հնարավորինս միասնական դաստիարակչական միջավայր: Դպրոցի դաստիարակչական միջավայրը ներառում է՝

- ✓ դպրոցի անձնակազմը
- ✓ ակտիվ ծնողական համայնքը
- ✓ դասարանական անձնակազմը

Դպրոցի դաստիարակչական միջավայրը հիմնված է աշակերտական ինքնավարության ձևավորման և դպրոցի ավանդույթների վրա:Դպրոցում դաստիարակչական համակարգի կատարելագործման նպատակով անհրաժեշտ է՝

- դաստիարակչական գործընթացներում առաջնորդվել միասնական սկզբունքներով և կանոններով,միասնական մանկավարժական պահանջներով,
- ծնողի և դպրոցի միջև կապերի ամրապնդում,
- ամրապնդել ծնողական և աշակերտական խորհուրդների կապը դպրոցի կառավարման խորհրդի և մանկավարժական խորհրդի հետ՝ ապահովելով տեղեկատվության կազմակերպումն ու տարածումը,
- ծնողներին ակտիվորեն ներգրավել դպրոցի դաստիարակչական գործընթացներում,
- ապահովել, որպեսզի դաստիարակչական աշխատանքները հիմնվեն հստակ

նախագծված դասղեկական պլանների վրա,

- ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ աշակերտների միջև, ինչպես նաև աշակերտների և ուսուցիչների միջև բավարար համագործակցություն, ինչպես նաև միմյանց հետ հաղորդակցվելու համար դրական միջավայր ստեղծելու ուղղությամբ,
- յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ ցուցաբերել անհատական մանկավարժական մոտեցում, ինչպես նաև հատուկ մանկավարժական միջոցառումներ կազմակերպել դժվար դաստիարակվող երեխաների հետ,
- դասղեկական ժամերի և արտադասարանական միջոցառումների միջոցով իրականացնել բարոյական, հայրենասիրական, գեղագիտական, աշխատանքային, բնապահպանական և այլ դաստիարակչական ծրագրեր,
- ընդլայնել դասարանների, առանձին աշակերտների, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների, ներդպրոցական և արտադպրոցական դաստիարակչական բնույթի միջոցառումներին մասնակցելու հնարավորությունները
- մշտապես կարևորել ինքնադաստիարակությունը, ինքնաքննադատությունը
- աշխատանքները կազմակերպել այնպես, որ աշակերտների մոտ արժեհամակարգիառաջնայնությունները ճիշտ ձևավորվեն:

## ***Հայրենասիրական Դաստիարակություն***

Մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակությունը մշտապես գտնվում է ժամանակակից դպրոցի ուշադրության կենտրոնում, քանի որ մանկությունն ու պատանեկությունը ամենանպաստավոր շրջաններնեն անձի մոտ հայրենիքի նկատմամբ իր պատկերացումները ճիշտ ձևավորելու, սիրո զգացմունքն արմատավորելու և որպես հայրենիքի պաշտպանի գիտակցումը սերմանելու համար:

Զարգացման ծրագրի այս հատվածում արտացոլված միջոցառումներն են

- սովորողների մոտ արմատավորել ազգային ավանդույթների և հաղթանակների նկատմամբ հարգանքը և հպարտության զգացումը,
- նպաստելու հոգեպես հարուստ և սոցիալապես ակտիվ կեցվածքով հայ քաղաքացուձևավորմանը,
- սովորողների կողմից կրճատելու տարբեր օրինախախտումների և նրանց մոտ առկա վնասակար սովորույթների մակարդակը,
- պահպանելու և տարածելու ՀՀ պետական խորհրդանիշերի (զինանշան, դրոշ օրհներգ) բովանդակությունն ու նշանակությունը դպրոցի յուրաքանչյուր աշակերտպետք է իմանա օրհներգը,
- բարձրացնելու աշակերտների՝ ազգային շահերի պաշտպանության

ձևավորմանը նպատակաուղղված
ռազմահայրենասիրական դաստիարակությունը՝միաժամանակ սերմանելով հանդուրժողական և հարգալից վերաբերմունք այլ ազգերի և կրոնների նկատմամբ,

- նպաստելու հայի ինքնության ամրապնդմանը նպաստող գործողությունների իրականացմանը(ազգային երգ ու պար, կոխ, ազգային խոհանոց, ասմունք, կիրառական արվեստներ)
- յուրաքանչյուր սովորողի մոտ արմատավորելու սեփական ազգի պատմության ու պետության կայացման գործում իր մասնակցության կարևորությունն ու դրա իրական հնարավորությունը. այդ նպատակով ուղղորդել աշակերտական խորհուրդը՝ դարձնելով վերջինս պետական մտածելակերպի զարգացման դպրոց,նպաստելու դպրոցում հայրենասիրական դաստիարակության կատարելագործմանը

**Հայրենասիրական դաստիարակության բնագավառում թվարկված ուղենիշային նպատակներին հասնելու համար մեր կարծիքով անհրաժեշտ է՝**

- դպրոցի ուսուցչական անձնակազմին ակտիվորեն ընդգրկել սովորողների հայրենասիրական դաստիարակության ծավալման և կատարելագործման գործընթացներում,
- դպրոցական բոլոր հիմնական միջոցառումներն իրականացնելիս ապահովել հայկական խորհրդանիշների և հայրենասիրական գաղափարների գործածումը,
- ամփոփել և տարածել հայրենասիրական դաստիարակության ասպարեզում լավագույն մասնագետների առաջավոր մանկավարժական փորձը,
- ուսուցիչների և դպրոցի ղեկավարության կողմից մշտապես և հետևողական կերպով միջոցառումներ ձեռնարկել աշակերտական միջավայրում լայն տարածում ստացած անտարբերության, էգոիզմի, ցինիզմի և չարության դեմ,
- դպրոցի աշակերտական խորհրդին ընդգրկել ավանդական, ազգային տոների կազմակերպմանն, անցկացմանն, ինչպես նաև ռազմահայրենասիրական դաստիարակությանն ուղղված միջոցառումներում:

## Ընտանիք-դպրոց համագործակցության բարելավումը

Դաստիարակությունը հաջողությամբ է պսակվում, եթե ընտանիքի հետ տարվող աշխատանքը և երեխայի դաստիարակությունը կատարվում են միաժամանակ:
Ընտանիք-դպրոց համագործակցության բարելավումը նպատակ ունի՝

- բարձրացնել աշակերտների ուսուցման արդյունքների համար ծնողների պատասխանատվությունը
- ծնողներին ավելի ակտիվորեն ներգրավել դպրոցի գործունեության մեջ,
- աջակցել ծնողական խորհուրդների աշխատանքի կազմակերպմանը Այդ նպատակով ճշտել՝ Դպրոց հաճախող այն աշակերտների թիվը, որոնք օգտվում են <<Փարոս>> ծրագրից
- երկկողմանի ծնողազուրկ աշակերտների թիվը,
- միակողմանի ծնողազուրկ աշակերտների թիվը,
- զոհված ազատամարտիկ ծնողներ ունեցող աշակերտների թիվը,
- հաշմանդամություն ունեցող աշակերտների վերաբերյալ տեղեկությունները
- հաշմանդամ ծնողներ ունեցող աշակերտների թիվը,
- նյութապես անապահով սովորողների կազմը,
- ծնողների խնամքից զրկված աշակերտների թիվը

## Ընտանիք-դպրոց համագործակցության բարելավման համար անհրաժեշտ է՝

- դպրոցի և ծնողների համագործակցության բովանդակության մեջ ներառել երեքհիմնական ուղղություններ՝
- ծնողների հոգեվաբանակավարժական տեղեկացվածության բարձրացում
- ուսումնադաստիարակչական գործընթացներին ծնողների մասնակցության ընդլայնում,
- դպրոցի կառավարման գործընթացներում ծնողների մասնակցության մեծացում:
- հանձնարարել դասղեկներին, որպեսզի վերջիններս անվերապահորեն ծանոթ լինեն աշակերտների ընտանիքների հետ, որտեղ փաստացի բացակայում է ընտանեկան դաստիարակությունը, և տեղեկացված լինեն այն սովորողների մասին,որոնց ծնողները միայնակ են, հաշմանդամ կամ գործազուրկ, զոհվել են կամ որոնց ընտանիքները նյութապես անապահով են և ունեն կյանքի անբավարարպայմաններ,
- կատարելագործել ծնողների հետ աշխատանքի ավանդական դարձած մեխանիզմները և պարբերաբար `
- կազմակերպել ծնողական ժողովներ և անհատական զրույցներ,
- ապահովել առարկայական ուսուցիչների և հոգեբանների կամ այլ

համապատասխան մասնագետների կողմից խորհրդատվության տրամադրումը,

- ապահովել դասարանական և ծնողական խորհուրդների ակտիվ գործունեությունը:
- ծնողների և երեխաների համատեղ մասնակցությամբ պարբերաբար անցկացնելմիջոցառումներ,
- ոգևորել և խրախուսել դպրոցի կյանքին ակտիվ մասնակցություն ցուցաբերած ծնողների անհատական նախաձեռնությունները, խրախուսել երեխաների և ծնողների համատեղ ստեղծագործական գործունեությունը,
- դպրոցի ծնողական խորհրդում ներգրավել դպրոցի ամենաակտիվ և փորձառուծնողներին,
- ամրապնդել ծնողական խորհրդի կապը աշակերտական, մանկավարժական և կառավարման խորհուրդների հետ

## ***<u>Աշխատանք մանկավարժական համակազմի հետ</u>***

Մեծ է մանկավարժի դերը դպրոցում և այն էլ ավելի նշանակալի դարձնելու համար դպրոցում անհրաժեշտ է ձևավորել գիտակցության, միջավայրի և հարաբերությունների այնպիսի մակարդակ, որը թույլ կտա արժևորել լավագույն մանկավարժների աշխատանքը:

Մանկավարժական համակազմի հետ աշխատանքի նպատակն է՝

- յուրաքանչյուր մանկավարժի համար դպրոցում ստեղծել հարմարավետ ստեղծագործական միջավայր,
- տարածել առաջավոր մանկավարժական փորձը (մասնախմբերի նիստերում, գործնական պարապմունքների, դասալսումների վերլուծության մանկավարժական գիտաժողովների, կոնֆերանսների և նմանատիպ այլ միջոցառումների ժամանակ),
- բարելավել մանկավարժական անձնակազմի մասնագիտական որակը,
- խրախուսել մանկավարժներին՝ հետազոտական աշխատանքներ կատարելու և սեփական գիտակրթական նյութերը ներկայացնելու համար՝ ապահովելով նրանց մասնագիտական աճը, իսկ առավել արժանիներին օժանդակել տարակարգիստացման գործում:

Մանկավարժական համակազմի հետ աշխատանքի կատարելագործման նպատակով անհրաժեշտ է՝ մանկավարժների համար դպրոցում ստեղծել տեղեկատվության մի համակարգ, որի միջոցով վերջիններս հնարավորություն կունենան մշտապես համալրելու իրենց գիտելիքները առնվազնհետևյալ ուղղություններով՝

- դպրոցի և կրթության նկատմամբ նոր պահանջներ,
- ժամանակակից մանկավարժական նվաճումներ,
- առաջավոր մանկավարժական փորձ,
- հոգեբանություն և մանկավարժություն:

- Ակտիվացնել տարրական և միջին դպրոցներում դասավանդող ուսուցիչներիկապը ավագ դպրոցի ուսուցիչների հետ,
- փոխադարձ դասալսումների կազմակերպման միջոցով ուսուցիչների միջև պարբերաբար կազմակերպել փորձի փոխանակում

  արդյունավետ կազմակերպել և առավելագույնս օգտագործել կազմակերպված վերապատրաստումների և ատեստավորումների արդյունքները:Այս ուղղությամբ անհրաժեշտ է առհասարակ դպրոցում պարտադիր պայման և ավանդույթ դարձնելցանկացած ուսուցչի կամ դպրոցի ղեկավարի կողմից վերապատրաստումների, դասընթացների, սեմինարների, հանդիպումների, կոնֆերանսների, ժողովների մասնակցության արդյունքում և/կամ ցանկացած այլ միջոցներով ստացված տեղեկատվության էական կամ ընդհանուր բաղադրիչների և սկզբունքների փոխանցումն ամբողջ մանկավարժական անձնակազմին՝ դպրոցում կազմակերպվող սեմինար քննարկումների միջոցով,
- ուսուցիչների հետ աշխատանքում առավել շեշտադրել և ընդգծել վերջիններիս կողմից կիրառվող դասավանդման նոր ձևերն ու մեթոդները,
- անընդհատ իրականացնել ուսուցիչների միջև համագործակցության մթնոլորտի կատարելագործանը նպաստող գործողություններ և միջոցառումներ,
- մշակել դպրոցում առկա խնդիրների՝ ուսուցիչների հետ համատեղ լուծմանն ուղղված մեխանիզմներ՝ նպատակ ունենալով ուսուցիչների մոտ ստեղծել բավարար վստահություն և անձնակազմի լիարժեք անդամ զգալու հնարավորություն,
- հաճախակի կազմակերպվող քննարկումների միջոցով ուսուցիչների մոտ ձևավորել սեփական գործոցությունները ինքնավերլուծելու և ինքնագնահատելու մշակույթ
- աջակցել ուսուցիչներին իրենց ինքնակրթության գործում
- անընդհատ մոնիթորինգի ենթարկել դպրոցի տնօրենի տեղակալների կողմից դպրոցի մանկավարժների հետ տարվող անհատական աշխատանքների որակն ու սահմանված սկզբունքներին համապատասխանությունը,
- մշտապես մոնիթորինգի ենթարկել, վերլուծել և օբյեկտիվորեն գնահատել դպրոցի մեթոդական միավորումների կողմից դպրոցի զարգացման ծրագրում նշված նպատակների իրագործմանն ուղղված աշխատանքները,
- մշտապես մոնիթորինգի ենթարկել, վերլուծել և գնահատել մանկավարժների գործունեությունը հետևյալ ասպարեզներում ՝
    1. ուսուցչի գիտելիքների և մանկավարժական արհեստավարժության պահպանում և կատարելագործում,
    2. աշակերտների գիտելիքների, հմտությունների և կարողությունների կատարելագործում
    3. կրթվելու և ինքնակրթվելու ցանկության առկայություն

## ***Բարելավվել դպրոցի նյութատեխնիկական բազան***

Ուսումնական գործընթացը բարձր մակարդակով արդի պահանջներին համապատասխան կազմակերպելու համար դպրոցին անհրաժեշտ է մասնաշենքերի և բակի կապիտալ վերանորոգում: Անհրաժեշտ է նաև բարելավել դպրոցի նյութատեխնիկական բազան /նոր համակարգիչների, տեսացրիչների, գունավոր տպիչների, պատճենահանող սարքերի, աշակերտական սեղան-աթոռների ձեռքբերում, տարածքը հսկող և նկարահանող տեսախցիկների տեղադրում/:

Դպրոցի հեռանկարային զարգացման ծրագիրը գրելիս դպրոցն իր առջև դնում է խնդիրներ, որոնք պահանջում են ֆինանսական միջոցների ծախսում տարբեր ուղղություններով: Այն ինչ կապված է վերապատրաստումների, նորամուծությունների, համակարգչային ուսուցման հետ, կկազմակերպենք մերիսկ ուժերով՝առանց որևէ ֆինանսական ներդրման: Նյութատեխնիկական բազան հարստացնելու համար կօգտվենք ծրագրերից, անհատ ձեռներեցների, հովանավորների, բարերարների ներդրումներից, ՀՀ օրենսդրությամբ և դպրոցի կանոնադրությամբ սահմանված ձեռնարկատիրական գործունեությունից: ՊՈԱԿ-ները իրավունք ունեն զբաղվելու հետևյալ ձեռնարկատիրական գործունեությամբ.

ա) լրացուցիչ հանրակրթական ծրագրերի իրականացում

բ) արտադպրոցական դաստիարակության կազմակերպում

գ) համակարգչային ծրագրերի և լեզուների ուսուցման կազմակերպում

դ)սննդի կազմակերպում

ե) ուսումնաարտադրական գործունեության ծավալում և արտադրանքի իրացում:

Ձեռնարկատիրական գործունեությունը դպրոցի համար լրացուցիչ ֆինանսավորման աղբյուր է: Ստացված շահույթն անհրաժեշտ է օգտագործել դպրոցի կանոնադրական

խնդիրների իրագործման նպատակով:

## ***<u>Դպրոցի զարգացման հնգամյա ծրագրի իրականացման վերջում կունենանք</u>***

- ✓ ուսման արդյունավետության բարձրացում՝ վարկանիշավորման ցուցանիշի բարելավում,
- ✓ դպրոցի նյութատեխնիկական բազայի հարստացում, ամրապնդում, բոլոր առարկաներիդասավանդման ընթացքում ՏՀՏ-ի կիրառում
- ✓ դպրոցի գործունեությունը կանոնակարգող նորմատիվային փաստաթղթերի փաթեթի ստեղծում
- ✓ մանկավարժական համակազմի մասնագիտական որակի բարձրացում, վերապատրաստումների(այդ թվում ներառական կրթության ապահովմանը ուղղված) ու կամավոր ատեստավորման մասնակցություն,տարակարգ ունեցող ուսուցիչների քանակական աճ
- ✓ արտաբյուջետային միջոցների հոսքերի ապահովում
- ✓ ժամանակակից մեթոդներով և տեղեկատվությամբ սովորողների գործնական հմտությունների զարգացմանն ուղղված կրթական գործընթացի համալրում, ՏՀՏ-ների ներդրման և օգտագործման բարձր մակարդակ
- ✓ սովորողների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված նախադրյալների ստեղծում
- ✓ աշակերտական կառավարման համակարգի՝ ծնողների, ուսուցչական անձնակազմի և առհասարակ՝ հասարակության համար առավել բաց և մատչելի դարձնելուն ուղղված քայլերի իրականացում
- ✓ դպրոց-ընտանիք-համայնք կապի ամրապնդում, որը կնպաստի դպրոցի և կրթության նկատմամբ յուրաքանչյուր աշակերտի և իր ընտանիքի վերաբերմունքի և պատասխանատվության բարձրացմանը
- ✓ ներառական կրթության իրականցում՝ պետական չափորոշիչների պահանջներին համապատասխան որակյալ, մատչելի և հասնելի կրթության ապահովում՝ անկախ սովորողների մեկնարկային հնարավորություններից, ընդունակություններից:

## ***Ծրագրի կատարմանը խոչընդոտող հավանական գործոններ***

Ցանկացած նախաձեռնություն, միջոցառումների ծրագիր կամ առհասարակ՝ որևէ ծրագրավորված գործընթաց իր կատարման ճանապարհին անխուսափելիորեն ենթարկվում է բազմաթիվ արտաքին և ներքին գործոնների ազդեցության, որոնք կարողեն այս կամ այն կերպովխոչընդոտել նախաձեռնությանը: Դպրոցի ղեկավարությունը առանձնահատուկ ուշադրություն է դարձնելու այդ գործոնների՝ դպրոցի գործընթացներում առավելագույնս չեզոքացնելու հնարավորությանը՝ նպատակ հետապնդելով հնարավորինս անշեղորեն կատարել ծրագրված միջոցառումները:

**Այդ գործոնների շարքին մասնավորապես հարկ ենք համարում դասել՝**

- հավանական վտանգները՝ կապված ծրագրված խնդիրներին համարժեք ֆինանսավորման աղբյուրների սակավության և ֆինանսական ռեսուրսների անբավարարության հետ,
- ծնողի անտարբեր վերաբերմունքը դպրոցի և սեփական երեխայինկատմամբ, հասարակության մեջ բարոյական արժեքների անկման միտումները,
- հասարակության մեջ տարածում գտած այնպիսի բացասական երևույթներն ինչպիսիք են՝ ծխելը, ալկոհոլիզմը, թմրամոլությունը և այլն,
- ԶԼՄ-ների միջոցով բացասական տեղեկատվության արագ տարածումը,
- աշակերտների թվի նվազումը կախված՝
  ա)ծնելիության անկումից
  բ) արտագաղթի մեծացումից,
  գ) դպրոցի ներքին խնդիրներով չպայմանավորված այլ գործոններից
- մանկավարժական անձնակազմի անդամների զգալի մասի մոտ առկա սոցիալ-տնտեսական խնդիրների և աշխատանքի բնույթից բխող ինտելեկտուալ ծանրաբեռնվածության և նյարդահոգեբանական լարվածության բացասական համադ-րությունը,
- բազմաթիվ ուսուցիչների կողմից դպրոցի առաջարկվող բարեփոխումներում ընդգրկվելու թույլ մոտիվացիան, քանի որ այն պահանջելու է մի քանի անգամ

ավելի ուժ և եռանդ, որը ցավոք չի ապահովվելու մի քանի անգամ ավելի կամ համարժեք ֆինանսական խրախուսում,

- դեռահասի հանգստի կազմակերպման հետ կապված միջոցառումներին ոչ բավարար մասնակցությունը՝ կինո, թատրոն, թանգարան այցելելու համար անհրաժեշտ բարձր վճարների, դպրոցի սեփական տրանսպորտային միջոցի բացակայության պատճառով:

## ***ԴՊՐՈՑԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ***

Դպրոցի մանկավարժական և ծնողական խորհուրդների հետ համատեղ հարկավոր է դպրոցի շրջանավարտին դաստիարակել այնպես, որ նա ճանաչի իր հայրենիքը, լինի հայրենասեր, լիարժեք կերպով տիրապետի ՀայաստանիՀանրապետության պետական լեզվին՝ հայերենին: Շրջանավարտը պետք է՝

- Գիտակցի հայ ժողովրդի ու հայոց պատմության դերը համաշխարհային քաղաքակրթության մեջ, ունենա ազգային մտածողություն և ինքնագիտակցություն, լինի ազգային լավագույն ավանդույթների կրողը, պահպանողն ու փոխանցողը,

- Ունենա պետական չափորոշչով սահմանված գիտելիքների համակարգ և ձեռք բերած գիտելիքները կյանքում ստեղծագործաբար կիրառելու ունակություն

- Օժտված լինի ինքնուրույն մտածելակերպով տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու կարողությամբ

- Իմանա իր իրավունքներն ու պարտականությունները, լինի օրինապահ, ազնիվ, մարդասեր, պատասխանատվությամբ օժտված, նախաձեռնող և հասարակական գործուն դիրքորոշում ունեցող քաղաքացի,

- Գիտակցի ընտանիք կազմելու անհրաժեշտությունը,պատրաստ լինի ընտանեկան կյանքին

- Կարողանա ճիշտ գնահատել իր հնարավորությունները,
- Ունենա վստահություն սեփական ուժերի հանդեպ, ինքնակրթությամբ զբաղվելու կամք, ունակ լինի սովորելու ողջ կյանքի ընթացքում,
- Պատրաստ լինի իր նախասիրություններին, հետաքրքրություններին և հակումներին համապատասխան մասնագիտություն և աշխատանք ընտրելու, ինքնուրույն տնտեսություն վարելու:

## ***ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՒՄ***

Դպրոցի զարգացման իրականացման վերահսկողության ամենաարդյունավետ միջոցը 5-ամյա այդ ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են: Դրա համար անհրաժեշտ է ծրագրի նպատակադրումները ամբողջությամբ արտացոլել դպրոցի տարեկան աշխատանքային պլաններում՝ ծրագրով սահմանված ժամանակացույցին համապատասխան:

Խնդիրների մեծ մասի լուծումը զգալի ֆինանսական միջոցներ չեն պահանջում, բայց պահանջում են մշտական աշխատանք և ուշադրություն, ուստի դրա համար հատուկ ժամանակացույց չի նշվում:Ծրագրի իրագործման արդյունքում ակնկալում ենք,որ կունենանք մրցունակ դպրոց,որն աշակերտների թվաքանակի խնդիր չի ունենա և կթողարկի ազատ մտածող, ինքնուրույն գործող, բարդ իրավիճակներում կողմնորոշվող, արագ հաղորդակցվող, հանդուրժող, հայ ժողովրդի և հայ մարդկության ստեղծած մշակութային արժեքները գնահատող շրջանավարտներ: